# Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

19 հոկտեմբերի 2016 թ.

Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր

Վարկ No P148836

Պայմանագիր # TGQ-02

Լիճքի համայնքի կենտրոնի վերակառուցում մանկապարտեզի տեղակայումով

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավո-րում Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել **“Լիճք համայնքի կենտրոնի վերակառուցում մանկապարտեզի տեղակայումով, TGQ-02”** պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:
2. Սույնով **Գեղարքունիքի մարզի, Լիճք համայնքի Ծրագրի իրականացման կոմիտեն** հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ **Լիճքի համայնքի կենտրոնի վերակառուցման մանկապարտեզի տեղակայումով**:

**Որակավորման պահանջները ներառում են.** ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված **165.000.000** ՀՀ դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝ քաղաքացիական շենքերի կառուցման կամ վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **113.000.000** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **226.000.000** ՀՀ դրամ, գ/ նվազագույնը **27.000.000** ՀՀ դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված «**Քաղաքացիական**» և «**Էներգետիկական**» լիցենզիաներ:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:
4. Շահագրգռված իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամից և ուսումնասիրել

Մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերին 10.00–17.00 հետևյալ հասցեով ք. Երևան, Կ.Ուլնեցու 31, 4-րդ հարկ, 407 սենյակ:

5. Շահագրգիռ իրավասու մասնակիցները Մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ Հայերեն լեզվով կարող են ստանալ վերոնշյալ հասցեով՝ վճարելով 3000 ՀՀ դրամ չվերադարձվող գումար: Վճարումն իրականացվում է բանկային փոխանցումով: Փաստաթղթերը տեղադրված են նաև www.gnumner.am կայքէջում:
6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով ամենաուշը **2016թ-ի նոյեմբերի 16-ին, ժամը 12:00-ին**: Առաջարկները ***չեն կարող*** ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Ուշացված առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները հրապարակայնորեն կբացվեն մրցույթի մասնակիցների նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվելու բոլոր ցանկացողների ներկայությամբ ստորև նշված հասցեով:
7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի ապահովման հայտարարագրով: Յուրաքանչյուր Փաթեթի հայտը պետք է ուղեկցվի առանձին Հայտի ապահովման հայտարարագրով:
8. Վերոնշյալ հասցեն է՝

Ում. Գնել Գրիգորյան

Գեղարքունիքի մարզի Լիճք համայնքի Ծրագրի իրականացման կոմիտեի նախագահ

Հեռ. 093 23 87 72

Հասցեն՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք, Ա2 թաղամաս, 12-րդ փող. 16 շենք
/Համայնքապետարան/